ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԵՐԻ ԱՐԹՈՒՐԻ

ՀՀ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՏՑԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՓՈՒԼՈՒՄ

Ը.00.02. «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
ԱՆԱՀԻՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԱՇՈՏ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ

տնտեսագիտության թեկնածու
ԱՐՍԵՆ ՎՐՈՒՅՐԻ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
Տնտեսագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2014թ. Հուլիսի 4-ին ժամը 13^{30}-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, ք. Երևան, Աբովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2014թ. Հունիսի 3-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
տեխ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ա.Հ.Առաքելյան

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Աշխատանքի շուկան և բնակչության զբաղվածությունը շուկայական տնտեսական համակարգում առանցքային տեղ են զբաղեցնում: Շուկայական տնտեսությամբ երկրներում բնակչության կենսամակարդակը բնութագրող մի շարք ցուցանիշների բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացման նախաձեռնությունն ու իրավունքը պատկանում է պետությանը՝ պետական կառավարման մարմիններին, այսինքն պետությունը պետք է վարի այնպիսի սոցիալ-տնտեսական քաղաքանություն, որը կապահովի սոցիալական առաջընթաց, տնտեսության կայունացում, բնակչության կենսամակարդակի բարձրացում, գործազրկության մակարդակի կրճատում, ինչպես նաև տնտեսությունում զբաղված բնակչության թվաքանակի մեծացում: Իսկ ճգնաժամի առկայության պայմաններում պետության կողմից իրականացված զբաղվածությանն աջակցման քաղաքականությունն իր մեջ պետք է ներառի նաև բնակչության զբաղվածությանն աջակցման օրենսդրական դաշտի կատարելագործումը, տարածաշրջանային աշխատանքի շուկաների զարգացումը և աշխատողների շարժունության ապահովումն այդ տարածաշրջաններում, տնտեսապես ակտիվ բնակչության խթանումը, աշխատատեղերի որակի բարձրացումը, մասնագիտական վերապատրաստման ապահովումը, բուհերի շրջանավարտների համար աշխատանքային փորձաշրջանների կազմակերպումը՝ հետագայում աշխատանքի անցնելու ակնկալիքով և, իհարկե, աշխատանքի շուկայի պետական կարգավորման համակարգի կատարելագործում:

Չնայած աշխատատեղերի ստեղծմանն ու բնակչության կենսամակարդակի բարձրացմանն ուղղված կառավարության ձեռնարկած աշխատանքներին, 2008թ.-ի վերջին երկիր ներթափանցած միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամն իր բացասական ազդեցությունն ունեցավ աշխատանքի շուկայի և բնակչության զբաղվածության վրա: Հայաստանի աշխատանքի շուկան ճգնաժամի ազդեցության պատճառով դեռևս անկայուն է, քանի որ միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով փոփոխությունների ենթարկվեցին ինչպես աշխատանքի շուկայի սուբյեկտները, այնպես էլ նրանց միջև առկա փոխհարաբերությունները: Այսօր հասարակության մեջ շարունակվում է պահպանվել սոցիալական լարվածությունը, դեռևս մեծ է բնակչության բևեռացումը, տարեցտարի կրճատվում է բնակչության թվաքանակը և զբաղվածության մակարդակը, ավելանում է գործազուրկների թվաքանակը: Նշված իրավիճակում խնդիրը բնակչության կենսամակարդակի բարձրացումն է, և ճգնաժամի թողած հետևանքների հաղթահարման և աշխատանքի շուկայի զարգացման նոր մոտեցումների մշակումը: Իսկ աշխատանքի շուկայի արդյունավետ և ճշգրիտ մտածված քաղաքականության իրականացման համար հարկավոր է խորը հետազոտություններ անցկացնել՝ ուշադրությունը կենտրոնացնելով ինչպես չլուծված բազմաթիվ խնդիրների, այնպես էլ միջազգային փորձի վրա:

Նման պայմաններում զգալի հրատապություն է ստանում ՀՀ տնտեսությունում ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների և դրա հաղթահարման ուղիների, ինչպես նաև ետճգնաժամային ժամանակահատվածում աշխատանքի շուկայի զարգացման միտումների լուսաբանումը և համապատասխան հանձնարարականների առաջադրումը: Իսկ աշխատանքի շուկայի և բնակչության զբաղվածությանը վերաբերող խնդիրները բացառապես ակտուալ են ՀՀ տնտեսության համար, քանի որ վերջինս այսօր կանգնած է առկա աշխատանքային ռեսուրսների պահպանման, դրանց ավելացման և արդյունավետ օգտագործման խնդրի առջև:

Հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը: Աշխատանքի շուկայի տեսական խնդիրների, հետազոտման մեթոդների ձևավորմանը, աշխատանքի շուկայի գործունեության մշակմանն ու կարգավորմանն են նվիրված մի շարք հայ և միջազգային հետազոտողների աշխատությունները, որոնք ձևավորել են բազմաթիվ տեսական ուղղություններ և գիտական մոտեցումներ այդ հարցերի շուրջ: Աշխատանքի շուկայի վերաբերյալ տեսությունների հիմքը կազմում են տնտեսական մտքի ականավոր

ներկայացուցիչների աշխատանքները: Սակայն, չնայած հետազոտողների կողմից կատարված ուսումնասիրությունների թվաքանակին և բազմազանությանը, աշխատանքի շուկային վերաբերող շատ խնդիրներ դեռևս լուծված չեն: Այդ ուսումնասիրություններում շեշտադրումը կատարվել է աշխատանքի շուկայի և զբաղվածության ընդհանուր դրույթների վրա, առաջարկվել են կարգավորման համընդհանուր մոտեցումներ, առանց հաշվի առնելու ազգային առանձնահատկությունները: Ուստի հայաստանյան աշխատանքի շուկայի ուսումնասիրման համար հարկավոր է իրականացնել համընդհանուր խորը վերլուծություն՝ հաշվի առնելով մեր երկրի ներկայիս վիճակը, մասնավորապես, ֆինանսատնտեսական ճգնաժամի թողած հետևանքները և ազգային առանձնահատկությունները: Այսօր Հայաստանի աշխատանքի շուկան բնութագրվում է մի շարք խնդիրներով, որոնք խորացել են ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով: Հետևաբար հարկավոր է համակողմանի վերլուծել ճգնաժամի առաջացրած հետևանքներն ու առաջարկել աշխատանքի շուկայի և զբաղվածության պետական կարգավորման մոտեցումներ՝ հաշվի առնելով մեր ազգային առանձնահատկությունները:

<u>Հետազոտության օբյեկտը և առարկան:</u> Ուսումնասիրության օբյեկտը Հայաստանի Հանրապետության աշխատանքի շուկան է, իսկ ուսումնասիրության առարկան ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունն է աշխատանքի շուկայի վրա և դրա զարգացման միտումները ետճգնաժամային փուլում:

<u>Հետազոտության նպատակն ու խնդիրները:</u> Հետազոտության նպատակն է վերլուծել ՀՀ աշխատանքի շուկայում առկա հիմնախնդիրները և առաջադրել այդ հիմնախնդիրների լուծման ուղիները տնտեսության ետճգնաժամային փուլում:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար ատենախոսության շրջանակներում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- վերլուծվել է ՀՀ աշխատանքի շուկան, ինչպես նախաճգնաժամային, այնպես էլ ճգնաժամի և դրանից հետո ընկած ժամանակահատվածներում,
- համակողմանիորեն վերլուծվել է ընթացիկ ֆինանսատնտեսական ճգնաճամի պատճառները և դրանց ազդեցության աստիճանը ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների վրա,
- ռեգրեսիոն վերլուծության միջոցով կապ է ստեղծվել աշխատանքի շուկան բնութագրող գործոնների և մարոտնտեսական ցուցանիշների միջև, ինչի արդյունքում վեր են հանվել տնտեսության բարելավման համար անհրաժեշտ գործոններ,
- ամբողջացվել է աշխատանքի շուկայի հայաստանյան մոդելն իրեն բնորոշ առանձնահատկություններով և առաջադրվել է աշխատանքի շուկայի հայաստանյան մոդելի կատարելագործման ուղիները,
- ՀՀ-ում գործազրկության մակարդակի վրա ազդող մի շարք գործոնների քանակական գնահատման հիման վրա բացահայտվել են դրանց և գործազրկության մակարդակի միջև առկա կապերը, ազդեցության աստիճանն ու ուղղությունները,
- առաջադրվել են աշխատանքի շուկայի զարգացման համար անհրաժեշտ պետական կարգավորման հիմնական ուղիները, ինչպես նաև առաջարկվել է աշխատանքի շուկայի զարգացման, գործազրկության կրճատման, զբաղվածության մակարդակի բարձրացման և զբաղվածության խնդիրների լուծմանն ուղղված հիմնական միջոցառումները:

<u>Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը:</u> Հետազոտության համար տեսական ու մեթոդական հիմք են հանդիսացել խնդրո առարկա հարցերի վերաբերյալ արդի տնտեսագիտական տեսությունների, աշխատանքի շուկայի, ճգնաժամի և մի շարք հրատապ մշակումների տեսական և գործնական հիմանդրույթները, ընդհանրացումներն ու եզրահանգումները:

Ատենախոսության հետազոտությունների համար հիմք են ընդունվել ՀՀ ԱՎԾ-ի կողմից հրապարակվող տվյալների բազան և վերլուծությունները կատարվել են այդ բազայում ներառված տվյալների հիման վրա: Տեղեկատվական բազայի մեջ տեղ են

գտել նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքներն ու նորմատիվ փաստաթղթերը, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներն ու հայեցակարգերը, ՀՀ Աշխատանքային օրենսգիրքը, ՀՀ Կենտրոնական բանկի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության հաշվետվությունները, հրապարակումներն ու վիճակագրական տարեգրքերը և աշխատանքի շուկայի գործունեությանն առնչվող այլ ամփոփ տվյալների բազաները:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

- համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի համակողմանի վերլուծության հիման վրա գնահատվել է ՀՀ տնտեսության և աշխատանքի շուկայի վրա ճգնաժամի ազդեցությունը,
- ելնելով աշխատանքի շուկաների և զբաղվածության քաղաքականությունը բնութագրող հիմնական մոդելների համեմատական վերլուծությունից և հաշվի առնելով ՀՀ առանձնահատկությունները՝ առաջադրվել են աշխատանքի շուկայի հայաստանյան մոդելի կատարելագործման ուղիները,
- մշակվել են ՀՀ աշխատանքի շուկայի զարգացմանը, գործազրկության կրճատմանը, զբաղվածության խնդիրների լուծմանն ու զբաղվածության մակարդակի բարձրացմանն ուղղված հիմնական միջոցառումները,
- գործազրկության վրա ազդող գործոնների վերլուծության հիման վրա մշակվել է տնտեսաչափական մոդելների համակարգ, որը թույլ է տվել գնահատել դրա վրա ազդող մակրոտնտեսական, ֆինանսական և սոցիալական գործոնների ազդեցության աստիճանն ու ուղղությունները:

Հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության գիտագործնական նշանակությունը կայանում է նրանում, որ հետազոտությունում ստացված արդյունքները, կատարված վերլուծությունները և մշակված առաջարկություններն ու մոտեցումները կարող են կիրառվել ՀՀ աշխատանքի շուկայի պետական կարգավորման, գործազրկության մակարդակի կրճատման և ցուցանիշների բարելավման ծրագրերի մշակման ժամանակ: Բացի այդ դրանք կարող են օգտագործվել ինչպես ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի, էկոնոմիկայի, Ֆինանսների և Տարածքային կառավարման նախարարությունների, պետական տարբեր գործակալությունների, արհեստակցական և գործատուների միությունների, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության, ՀՀ աշխատանքի պետական տեսչության, Սոցիալական ապահովության պետական ծառայության, այնպես էլ ՀՀ Ազգային ժողովի, հայրենական այլ հետազոտողների, մասնագետների և ԲՈՒՀ-երի ուսանողների կողմից:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ-ի տնտեսագիտության ֆակուլտետի «Կառավարման և գործարարության» ամբիոնում: Ատենախոսության թեմայով զեկուցումներ են եղել «Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր» թեմայով միջազգային գիտաժողովում: Հետազոտության հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի կողմից հրապարակված 5 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության տեքստը պարունակում է 10 աղյուսակ, 28 գծապատկեր: Ծավալը կազմում է մեքենագիր 158 էջ (ներառյալ օգագործված գրականության ցանկը և հավելվածը):

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակը և խնդիրները, ուսումնասիրության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ձևակերպված են ստացված գիտական արդյունքները և նորույթը, ինչպես նաև ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին `**«Աշխատանքի շուկայի տեսական հիմքերը»,** գլխում ուսումնասիրվել են աշխատանքի շուկայի հիմնական բնութագրերը, առանձնահատկությունները, աշխատանքի շուկային մասնակցող երկու կողմերի հարաբերությունները, աշխատանքի վարձատրության ձևերի և աշխատանքի շուկան բնութագրող հիմնական ցուցանիշների հաշվարկման եղանակները:

Շուկայական տնտեսության զարգացման համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ աշխատանքի շուկան համընդհանուր տնտեսական շուկայական համակարգի կարևորագույն բաղադրիչներից մեկն է համարվում: Այստեղ ձևավորվում և կարգավորվում են մի կողմից վարձու աշխատողների, այսինքն՝ աշխատանք առաջարկողների, մյուս կողմից էլ գործատուների՝ աշխատանքի պահանջարկ ներկայացնողների հարաբերությունները: Աշխատանքը մարդու մտավոր և ֆիզիկական կարողությունն է, որը մասնակիորեն կամ լրիվությամբ գործածվում է որոշակի արդյունքի հասնելու նպատակով՝ չհաշված այն հոգևոր բավարարվածությունը, որը ձեռք է բերվում անմիջականորեն կատարված աշխատանքից: Թույլ տալով աշխատողին ազատ առաջարկել սեփական «աշխատանքն» իրեն հարմար գնով՝ շուկան նրան տալիս է հնարավորություն իր տաղանդի, ունակությունների, որակավորման, աշխատանքային փորձի դիմաց պահանջել համապատասխան վարձատրություն: Այս կերպ էլ ձևավորվում է աշխատանքի բնական գինը՝ աշխատավարձը:

Աշխատանքի շուկայի ցուցանիշներն ուսումնասիրելու և դրանց հիման վրա վերլուծություն իրականացնելու համար նախևառաջ անհրաժեշտ է ուսումնասիրել այդ ցուցանիշների հաշվարկման գործընթացը, հետազոտման մեթոդաբանությունը, այսինքն՝ վիճակագրությունը: Աշխատանքի շուկայի վիճակագրությունն իր մեջ ներառում է տնտեսապես ակտիվ բնակչության, զբաղվածության ու գործազրկության վիճակագրությունները, աշխատաժամանակի ու աշխատանքային կոնֆլիկտների վիճակագրությունը: Աշխատանքի շուկային վերաբերյալ տեղեկատվությունը պետության տնտեսական և սոցիալական քաղաքականության մշակման կարևորագույն տարրերից է հանդիսանում: Բացի այդ զբաղվածության և գործազրկության մակարդակի ցուցանիշները, միջին և նվազագույն աշխատավարձի ցուցանիշները կարևոր մակրոտնտեսական ցուցանիշներ են հանդիսանում և բնութագրում են տնտեսության վիճակն ու զարգացվածության մակարդակը: Աշխատանքի շուկայի վերաբերյալ տեղեկատվությունը կարևոր է նաև բոլոր նրանց համար, ովքեր որևէ կապ ունեն աշխատանքի շուկային հետ, ինչպես նաև գործատուներին և աշխատողներին: Այս ցուցանիշներն օգտագործվում են նաև բնակչության կյանքի տևողության մակարդակի, տնտեսության ճյուղային մրցունակության վերլուծության համար:

Ժամանակակից պայմաններում աշխատանքի շուկայի վիճակագրության հիմնական խնդիրները հետևյալն են[1]՝

- տնտեսապես ակտիվ բնակչության, զբաղվածության, գործազրկության ընթացիկ տվյալների ուսումնասիրություն, զբաղվածության ճյուղային և մասնագիտական տվյալների ուսումնասիրություն,
- աշխատողների տեղաշարժի վերաբերյալ տվյալների ուսումնասիրություն,
- աշխատաժամանակի օգտագործման, դրա կառուցվածքի ուսումնասիրություն, ինչպես նաև աշխատաժամանակի օգտագործման ցուցանիշների հաշվարկ,

[1]Экономическая статистика. 2-е изд.,доп.:Учебник/Под ред. Ю.Н. Иванова.-М.:ИНФРА-М,2002.,с77.

- աշխատավարձի վերաբերյալ տվյալների, դրա կառուցվածքի և դինամիկայի ուսումնասիրություն և այլն:

Վիճակագրական տվյալներն անհրաժեշտ են զբաղվածության իրավիճակի կարգավորման համար, աշխատանքային գործընթացի գնահատման և կատարելագործման, զբաղվածության, եկամուտների և կյանքի մակարդակի այլ աստիճանների միջև փոխհարաբերությունների չափման, աշխատանքի արտադրողականության դինամիկայի ուսումնասիրման համար: Աշխատանքի շուկայի վիճակագրությունն, իր մեջ ներառելով տնտեսապես ակտիվ բնակչության վիճակագրությունը, զբաղվածության, գործազրկության, աշխատանքային ժամվա և աշխատավարձերի վճարման վիճակագրությունը, օգտագործվում է աշխատանքի շուկայի կարգավորման, բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման, բարձր որակավորում ունեցող կադրերի ճիշտ ժամանակին պատրաստման, աշխատավարձերի ճշգրիտ վճարման կազմակերպման, գործազրկության մակարդակի կրճատման և զբաղվածների թվաքանակի ավելացման համար: Աշխատանքի շուկայի մասին տեղեկատվությունը կարևոր գործիք է համարվում պետության տնտեսական և սոցիալական քաղաքականության մշակման համար:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ աշխատանքի շուկայի իրավիճակային վերլուծությունը»,** գլխում կատարվել է ՀՀ աշխատանքի շուկայի նախաճգնաժամային վիճակի վերլուծություն, ինչպես նաև կատարվել է Հարավային Կովկասի երկրների աշխատանքի շուկաների համեմատական վերլուծություն, պարզելու համար, թե համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն ինչպիսի ազդեցություն է ունեցել Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի աշխատանքի շուկաների վրա: Համակողմանիորեն դիտարկվել և վերլուծվել են միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացման պատճառները և դրանց ազդեցության քանակական ու որակական գնահատականները ՀՀ տնտեսության և աշխատանքի շուկայի վրա, ինչպես նաև տրվել են հետճգնաժամային զարգացման միտումները:

Հայաստանում, տնտեսական ճգնաժամի առաջին նշաններն ի հայտ եկան 2008թ.-ի նոյեմբերի վերջերին, երբ միջազգային շուկաներում նկատվեց Հայաստանից արտահանվող պղնձի խտանյութի կտրուկ գնանկում՝ կապված պղնձի խտանյութի նկատմամբ պահանջարկի նվազման հետ, որի արդյունքում նվազեցին նաև կապիտալի ներհոսքի ծավալները Հայաստան: Կայուն տնտեսական աճի վարքագիծը ՀՀ-ում պահպանվել է 2000-ականների ընթացքում: Սակայն, գլոբալ տնտեսական ճգնաժամը հարվածեց նաև Հայաստանի տնտեսությանը: Եթե դիտարկենք 2006-2012թթ-ի ընթացքում գրանցված որոշ մակրոտնտեսական ցուցանիշները, ապա պատկերը հետևյալն է (Աղ. 1)՝

Աղյուսակ 1. Մակրոտնտեսական ցուցանիշները ՀՀ-ում 2005-2012թթ. [2]

	2006	2007	2008	2009	2010	2011	2012
Համախառն ներքին արդյունքը շուկայական գներով (մլրդ. դրամ)	2656.2	3149.3	3568.2	3102.8	3509.6	3776.4	3997.6
Համախառններքին արդյունքը շուկայական գներով (մլն. ԱՄՆ դոլար)	6384.5	9206.3	11662.0	8541.1	9260.3	10138.1	9950.3
Համախառն ներքին արդյունքը մեկ շնչի հաշվով (հազ. դրամ)	824.6	976.0	1103.3	968.5	1062.7	1155.4	1321.9
Եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը (մլն. դրամ)	441483.1	588040.4	785355.0	689995.1	780439.4	880851.0	939388.1
Համախմբված բյուջեի ծախսեր (մլն. դրամ)	481183.2	634734.6	810574.5	929108.6	954316.5	986509.2	1001049.7
Համախմբված բյուջեի պակասուրդ (ՀՆԱ-ի նկատմամբ տոկոս)	-1.3	-1.5	-0.7	-7.5	-5.0	-2.8	-1.5

[2] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից Հայաստանի 2007-2013թթ.-ի ՀՀ ԱՎԾ-ի վիճակագրական տարեգրքերի տվյալների հիման վրա:

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից Ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակահատվածում, ինչպես նաև դրան հաջորդող առաջին տարվա ընթացքում զգալի փոփոխություններ են դիտվել ՀՀ-ի մակրոտնտեսական ցուցանիշների մեջ: Բացի այն, որ զգալի չափերով կրճատվել է երկրում ՀՆԱ-ի մեծությունը (մոտ 14.1%), աճել է նաև գործազրկության մակարդակը, երկրում դիտվել է 9.4% գների աճ, ավելացել են բյուջեի ծախսերը, որի շնորհիվ էլ համախմբված բյուջեի պակասուրդն ավելի է մեծացել և կազմել է -7.5%: Սակայն 2010-2012թթ-ի ընթացքում արդեն նկատելի է, որ տնտեսությունը կրկին թևակոխել է վերելքի փուլ և դրական փոփոխություններ են գրանցվել մակրոտնտեսական ցուցանիշների մեջ:

ՀՀ աշխատանքի շուկայում դիտվել են ցուցանիշների հետևյալ դինամիկաները(Աղ. 2)՝

Աղյուսակ 2. Աշխատանքի շուկայի ցուցանիշները ՀՀ-ում 2006-2012թթ.[3]

Տարիներ	Բնակչությունը (հազ. մարդ, տարեվերջ)	Տնտեսապես ակտիվ բնակչությունն (հազ, մարդ)	Զբաղվածներ տնտեսության ճյուղերում (հազ, մարդ)	Գործազուրկներ (հազ. մարդ)	Գործազրության մակարդակը (%)	Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության թիվը (հազ, մարդ)	Աշխատանքային ռեսուրսներ (հազ, մարդ)	Միջին ամսական աշխատավարձ (դրամ)	Նվազագույն աշխատավարձ (դրամ)
2006թ	3222,9	1181,3	1092,4	88,9	7,4	933,6	2114,9	62293	15000
2007թ	3229,9	1184,3	1101,5	82,8	7	987,2	2171,4	74227	20000
2008թ	3230,1	1194,6	1119,7	231,6	16,4	998,6	2235,1	88942	25000
2009թ	3249,5	1418,8	1152,8	265,9	18,7	978,9	2397,6	96019	30000
2010թ	3262,6	1463,3	1185,2	278,8	19	926,4	2389,7	102652	30000
2011թ	3274,3	1440,9	1175,1	265,7	18,4	845,4	2286,3	108092	32500
2012թ	3026,9	1418.3	1172.8	245.5	17.3	842.5	2260.8	113163	35000

Ճգնաժամի հետևանքով 2008-2010թթ.-ի ընթացքում տեղի է ունեցել տնտեսությունում պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակի աճ, և 2010թ.-ին գրանցվել է դիտարկվող ժամանակահատվածի՝ 2005-2012թթ-ի, ամենաբարձր ցուցանիշը՝ 278.8 հազար գարծազուրկներ: 2007-2010թթ-ի ընթացքում գործազրկության թվաքանակն ավելացել է 196 հազար մարդով: Սակայն կառավարության կողմից իրականացրած հակաճգնաժամային միջոցառումների շնորհիվ 2011թ-ից գործազրկության մակարդակը կրճատման միտում է դիտվել: Սակայն, ի տարբերություն գործազուրկների թվաքանակի, տնտեսությունում զբաղածների թվաքանակը ճգնաժամի հետևանքով ոչ մի էական փոփոխությունների չի էնթարկվել և շարունակել է ոչ մեծ, բայց հաստատուն տեմպերով աճել: Զբաղվածների թվաքանակի աճը խոսում է դրական փոփոխությունների և տնտեսության աշխուժացման մասին :

Երիտասարդներն անհամեմատ ավելի շատ են տուժել ճգնաժամից: 2009թ. գործազրկությունը երիտասարդների շրջանում կտրուկ աճել է և շարունակում է բարձր մնալ: 15-19 տարեկան անձանց շրջանում գործազրկությունը 40 տոկոսից հասավ 60 տոկոսի, իսկ 20-24 տարեկան անձանց շրջանում՝ 35-36 տոկոսի: Այս ցուցանիշներն ավելի բարձր են, քան երիտասարդների (15-24 տարեկան) գործազրկության համաշխարհային ցուցանիշները, որոնք այդ նույն տարվա ընթացքում կազմել են 13 տոկոս: 2009 թ. երիտասարդների գործազրկությունը զարգացած երկրներում կազմում էր միջինը 12 տոկոս, իսկ ԵԿԱ-ի մյուս երկրներում՝ 21 տոկոս[4]:

Զբաղվածության ցածր մակարդակը, մի կողմից, պայմանավորված է անբավարար թվով նոր աշխատատեղերի ստեղծմամբ, մյուս կողմից՝ առկա աշխատատեղերի և աշխատողների մասնագիտական անհամատեղելիությամբ: Նոր աշխատատեղերի սահմանափակ լինելու պատճառը երկրում փոքր, դինամիկ և աշխատատեղեր ստեղծող ձեռնարկությունների զանգվածի բացակայությունն է: Աշխատողների ներգրավվածությունը Հայաստանի տնտեսությունում ցածր է, որի հետևանքով երկրում բարձր է գործազրկության մակարդակը: Խնդիրներ կան աշխատանքի պահանջարկի,

3 Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից Հայաստանի 2007-2013թթ.-ի ՀՀ ԱՎԾ-ի վիճակագրական տարեգրքերի տվյալների հիման վրա:

4 ԱՄԿ (2011թ.)

առաջարկի և առաջարկվող աշխատատեղերի ու աշխատողների մասնագիտան համապատասխանության հարցերում: Ցածր է նաև գործարարության մակարդակը, որի մասին է վկայում նորաստեղծ ընկերությունների անբավարար քանակը և լուծարվող ընկերությունների բարձր տոկոսը: Ինչ վերաբերում է աշխատողների կողմից աշխատանքի առաջարկին, ընկերությունները բողոքում են որակյալ աշխատողների պակասից: Ձգտելով ավելացնել իրենց արտադրանքը՝ ընկերություններն ավելի շատ հակված էին բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը, քան վարձելու նոր աշխատողների: Սակայն համաշխարհային ճգնաժամի հետևանքով գործազրկությունը կտրուկ աճեց նույնիսկ տնտեսական վերականգնման երեք տարիներից հետո: Գործազրկության բարձր մակարդակը և աշխատանքի ցածր արտադրողականությունը բացասական ազդեցություն են թողնում ինչպես տնտեսական աճի, այնպես էլ աղքատության կրճատման վրա: Տնտեսական աճը պահպանելու համար մարդկային ռեսուրսները պետք է բաշխվեն արդյունավետորեն և ուղղվեն բարձր արտադրողականություն ունեցող ոլորտներ (Աղ. 3)՝

Աղյուսակ 3. ՀՆԱ-ի ծավալը, զբաղվածների թվաքանակը և արտադրողականությունը ՀՀ-ում ըստ տնտեսության ճյուղերի 2009 և 2012թթ.-ին.[5]

	2009թ.			2012թ.		
	ՀՆԱ-ի ծավալը, մլն. դրամ	Զբաղվածների թվաքանակը, հազ. մարդ	Արտադրողականությունը, հազար դրամ	ՀՆԱ-ի ծավալը, մլն. դրամ	Զբաղվածների թվաքանակը, հազ. մարդ	Արտադրողականությունը, հազար դրամ
Արդյունաբերություն	669398,9	110,6	6052,4	1121906,7	138,3	8112,1
Գյուղատնտեսություն	552100,1	496,2	1112,7	841500,1	437,2	1924,7
Շինարարություն	579740,7	56,3	10297,3	479415,6	69,2	6928,0
Տրանսպորտ և կապ	297194,7	54,1	5493,4	318096,7	73,9	4304,4
Առևտուր և ծառայություններ	1573194,5	106,3	14799,6	2195505,8	129,9	16901,5

Այսպես ըստ պաշտոնական վիճակագրության, Հայաստանում զբաղվածների ամենամեծ թվաքանակը և՛ ճգնաժամի տարիներին, և՛ դրանից հետո եղել է գյուղատնտեսությունում: 2012թ.-ին գյուղատնտեսությունում զբաղվածների թվաքանակը մոտ 3 անգամ գերազանցել է արդյունաբերությունում զբաղվածների թվաքանակը: Միջին հաշվարկներով՝ յուրաքանչյուր գյուղացի 2012թ.-ին ստեղծել է մոտ 2 մլն դրամի արտադրանք, որը տնտեսության մյուս ճյուղերի համեմատ ամենացածրն է[6]: Բացի այդ Հայաստանի գյուղատնտեսության արտադրողականության ցածր մակարդակն ազդում է տնտեսության արտադրողականության ընդհանուր մակարդակի վրա: Իսկ այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ գյուղացու աշխատանքը սեզոնային է և նա աշխատում է ընդամենը 8 կամ 9 ամիս: Այսինքն այստեղ առկա է մշտական թերբեռնվածություն, քանի որ ձմռանը պարապ մնացած գյուղացին որպես կանոն աշխատանք գտնել չի կարողանում: 2012թ.-ին տնտեսության ճյուղերում զբաղվածների թվաքանակի աճը և այդ ոլորտների մասնաբաժնի աճը խոսում է տնտեսության աշխուժացման մասին: 2012թ.-ին տնտեսությունում զբաղվածների թվաքանակով երկրորդ տեղում գտնվել է արդյունաբերության ոլորտը, ինչը խոսում է երկրում արդյունաբերության զարգացման մասին, արդյունաբերական արտադրանքի ծավալը ևս շեշտակի աճել է այս ժամանակահատվածում: Ե՛վ 2009թ.-ին, և՛ 2012թ.-ին ամենամեծ արտադրողականություն ապահովել են առևտրի և ծառայությունների ոլորտում զբաղվածները, այնուհետև շինարարության և արդյունաբերության ոլորտի աշխատողները: Այսպիսով կարելի է արձանագրել, որ Հայաստանի տնտեսությունը ցուցաբերում է արտադրողականության աճի միտումներ, սակայն տնտեսության տարբեր ոլորտներում դրանք տարբեր կերպ են դրսևորվում:

[5] Աղյուսակը կազմվել և հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից ՀՀ ԱՎԾ-ի վիճակագրական տարեգրքերի (2007-2013թթ) տվյալների հիման վրա:

[6] www.armstat.am

Հետազոտության շրջանակներում համադրվել է նվազագույն աշխատավարձի, միջին աշխախատավարձի, և գնաճի (ՍԳԻ) դինամիկաները ՀՀ-ում 2000-2012թթ.-ին և ռեգրեսիոն վերլուծության միջոցով ցույց է տրվել թե այս մակրոտնտեսական ցուցանիշներից յուրաքանչյուրի փոփոխություն այս ամբողջ դիտարկվող ժամանակահարվածում ինչպես է անրադարձել աղքատության մակարդակի փոփոխության վրա (Գծ.1) `



Գծապատկեր 1. Աղքատության մակարդակի, գնաճի տեմպի, նվազագույն աշխատավարձի և միջին աշխատավարձի դինամիկաները ՀՀ-ում 2000-2012թթ.[7]

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից դիտարկվող ժամանակահատվածում աղքատության մակարդակը հիմնականում ուղեկցվել է նվազագույն և միջին աշխատավարձերի աճով, ինչը, ճիշտ է, դրական արդյունք է, բայց այն ոչ մի էական ազդեցություն չի ունեցել աղքատության մակարդակի կրճատման վրա, քանի որ այն շարունակել է աճել նաև ճգնաժամային տարիներին և դրանից հետո: Ընդ որում այդ աճը ճգնաժամային տարիներին ուղեկցվել է նաև գների զգալի բարձրացումներով, ինչն էլ ավելի է նպաստել աղքատության խորացմանը երկրում: Ասվածի վառ ապացույցն է նաև ռեգրեսիոն վերլուծությամբ ստացված հետևյալ արդյունքները (ընդ որում դիտարկվող գործոններից յուրաքանչյուրը նշանակալից ազդեցություն ունի աղքատության մակարդակի փոփոխության վրա)`

1. **Աղքատության մակարդակը = 0.0007*Նվազագույն աշխատավարձ + 12.102[8]**

Այսինքն ստացվեց, որ նվազագույն աշխատավարձի 1000 դրամ աճը կհանգեցնի բնակչության աղքատության մակարդակի 0.7%-ով աճին, ճիշտ է նաև հակառակը: Այսպիսով, նվազագույն աշխատավարձը թեև նշանակալից ազդեցություն ունի աղքատության մակարդակի վրա, բայց դրա բարձրացումը որևէ ազդեցություն չունի աղքատության մակարդակի կրճատման վրա, ավելին աշխատավարձի բարձրացումը հանգեցնում է աղքատության խորացմանը, քանի որ այս երկու ցուցանիշների միջև ուղիղ կապ գոյություն ունի: Իսկ դա էլ պայմանավորված է այն հանգամանքով, որ այս ամբողջ ժամանակահատվածում նվազագույն աշխատավարձի աճն ուղեկցվել է աղքատության մակարդակի աճով: Հետևաբար ստացվեց, որ նվազագույն աշխատավարձի մակարդակը բավարար չէ նվազեցնելու աղքատության մակարդակը: Ուստի հարկավոր է վերանայել

[7] Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից ՀՀ ԱՎԾ-ի վիճակագրական տարեգրքերի տվյալների հիման վրա:

[8] Հաշվարկները կատարված են հեղինակի կողմից Eviews ծրագրային փաթեթի միջոցով, տվյալները վերցված են ՀՀ ԱՎԾ-ի վիճակագրական տարեգրքերից: Հաշվարկների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվությունը տեղադրված է հավելվածում:

նվազագույն աշխատավարձի իրական չափը, որպեսզի հնարավոր լինի իջեցնել աղքատության մակարդակը:

2. Աղքատության մակարդակը = 0.0002*Միջին աշխատավարձ + 10.158[9]

Այսինքն ստացվեց, որ միջին աշխատավարձի 1000 դրամ աճը կհանգեցնի բնակչության աղքատության մակարդակի 0.2%-ով աճին, ճիշտ է նաև հակառակը: Հետևաբար ստացվեց, որ միջին աշխատավարձի բարձրացումը ևս որևէ ազդեցություն չունի աղքատության մակարդակի կրճատման վրա և բացասաբար է անդրադառնում աղքատության մակարդակի վրա: Ուստի միջին ամսական աշխատավարձի մակարդակը նույնպես բավարար չէ ապահովելու համար աղքատության մակարդակի նվազում:

3. Աղքատության մակարդակը = 1.41*Գնաճ - 121.191[10]

Հավասարումից հետում է, որ գների 1% աճը կհանգեցնի բնակչության աղքատության մակարդակի 1.4%-ով աճին, ճիշտ է նաև հակառակը: Ստացվեց, որ գների աճման արդյունքում աղքատության մակարդակը ևս աճում է, ինչը միանգամայն տրամաբանական է, քանի որ այլ հավասար պայմաններում գների աճին զուգահեռ նվազում է մարդկանց գնողունակությունը, որն էլ կարող է հանգեցնել աղքատության աճին:

Ամփոփելով կարող ենք ասել, որ չնայած ձեռնարկված բոլոր հակաճգնաժամային միջոցառումներին, որոնք ուղեկցվեցին տնտեսությունում նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ, ՀՆԱ-ի աճով, գործազրկության մակարդակի կրճատմամբ, նոր աշխատատեղերի ստեղծմամբ ու զբաղվածության թվաքանակի աճով, տնտեսությունը դեռևս գտնվում է լճացման փուլում: Ավելին նվազագույն աշխատավարձի և միջին աշխատավարձի բարձրացումը ոչ մի կերպ չի անդրադառնում աղքատության մակարդակի կրճատման վրա, քանի որ դիտարկված ժամանակահատվածում աշխատավարձի բարձրացումները ուղեկցվել են գների աճով: Իսկ հաշվարկների արդյունքում ստացվեց, որ գների 1% աճը կարող է հանգեցնել աղքատության մակարդակի 1.4% աճին: Այսինքն աղքատության մակարդակն ուղիղ կախվածության մեջ է գտնվում աշխատավարձի մակարդակի, գների աճի հետ և աշխատավարձի բարձրացումը փոխհատուցվում է գների աճով: Հետևաբար ստեղծված իրավիճակում աղքատության մակարդակը երկրում կրճատելու համար նախևառաջ անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել մակրոտնտեսական իրավիճակի վրա՝ հատկապես զսպել գնաճը: Եվ միմիայն այս դեպքում արդեն նվազագույն աշխատավարձի փոփոխությունը դրականորեն կազդի աղքատության մակարդակի կրճատման վրա: Բացի այդ մոդելների հաշվարկման արդյունքում ստացված արդյունքները վկայում են, որ՝

- նվազագույն և միջին աշխատավարձերի մակարդակը բավականին հեռու է աղքատության մակարդակը հաղթահարելու համար,
- հրապարակվող վիճակագրական տվյալները, որոնք արտացոլում են իրականացվող սոցիալական քաղաքականությունը, չեն արտացոլում տնտեսական իրականությունը ՀՀ-ում:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ աշխատանքի շուկայի զարգացման միտումները»** գլխում ուսումնասիրվել են աշխատանքի շուկայի և զբաղվածության քաղաքականությունը բնութագրող հիմնական մոդելները, ընդհանրացվել է հայաստանյան մոդելի առանձնահատկությունները և առաջադրվել է աշխատանքի շուկայի հայաստանյան մոդելի կատարելագործման ուղիներն ու միջոցառումների ցանկը: Ուսումնասիրվել են նաև աշխատանքի շուկայի կարգավորման հիմնական ուղիները և առաջարկվել աշխատանքի շուկայի զարգացման, գործազրկության կրճատման, զբաղվածության մակարդակի բարձրացման և զբաղվածության խնդիրների

---

[9] Հաշվարկները կատարված են հեղինակի կողմից Eviews ծրագրային փաթեթի միջոցով, տվյալները վերցված են ՀՀ ԱՎԾ-ի վիճակագրական տարեգրքերից: Հաշվարկների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվությունը տեղադրված է հավելվածում:

[10] Հաշվարկները կատարված են հեղինակի կողմից Eviews ծրագրային փաթեթի միջոցով, տվյալները վերցված են ՀՀ ԱՎԾ-ի վիճակագրական տարեգրքերից: Հաշվարկների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվությունը տեղադրված է հավելվածում:

լուծմանն ուղղված հիմնական միջոցառումները: Իսկ գործազրկության մակարդակի վրա ազդող գործոնների վերլուծության շրջանակներում կառուցված տնտեսաչափական մոդելների համակարգի հիման վրա կատարված քանակական գնահատման արդյունքում վեր են հանվել և հիմնավորվել գործազրկության մակարդակի կրճատման վրա ազդող մակրոտնտեսական, ֆինանսական և սոցիալական հիմնական գործոնների ազդեցության աստիճանն ու ուղղությունները:

Հայաստանի աշխատանքի շուկան դեռևս գտնվում է կայացման փուլում, և դա է պատճառը, որ աշխատանքի շուկայի հայաստանյան մոդելը մինչև օրս իր հստակ բնութագրումը չի ստացել: Հայաստանի աշխատանքի շուկայի մոդելը յուրահատուկ է և տարբերվում է այլ երկրների աշխատանքի շուկաների մոդելներից՝ հաշվի առնելով մեր երկրի տնտեսական և քաղաքական առանձնահատկությունները, ազգային մենտալիտետը, բնակչության նախասիրությունները, աշխատելու ունակությունները և այլն: Այս մոդելը ձևավորվել է տարբեր պատմական, տնտեսական, քաղաքական և սոցիալական խնդիրների ազդեցության ներքո: Աշխատանքի շուկայի մոդելի, որի հիմքում ընկած են կոնկրետ օրենքներ, նորմեր, ընթացագարգեր, ձևավորումը սկսվել է շատ վաղ ժամանակներից: Սակայն հայաստանյան տնտեսագիտական գրականության մեջ մինչ օրս դեռևս հստակ ձևակերպված և նկարագրված չէ հայաստանյան աշխատանքի շուկայի մոդելը և դրա առանձնահատկությունները:

Աշխարհում կան աշխատանքի շուկայի տարբեր մոդելներ, սակայն այսօրվա դրությամբ հնարավոր է առանձնացնել աշխատանքի շուկայի 3 հիմնական մոդելներ՝ եվրոպական (միջմայցամաքային), անգլոսաքսոնական (ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա, Ավստրալիա, Նոր Զելանդիա) և ճապոնական: Չնայած այս մոդելներին բնորոշ ինքնատիպ առանձնահատկություններին, նրանք ունեն նաև համընդհանուր հատկանիշներ, ինչպես, օրինակ, աշխատավարձը: Առանձնացնելով աշխատանքի շուկայի հայաստանյան մոդելի սուբյեկտներին, դրանց միջև առաջարկվող իրավահարաբերությունները, և այն առանցքային հատկանիշները, որոնք բնութագրական են աշխատանքի շուկայի հայաստանյան մոդելին՝ հնարավոր է թվարկել այն առանձնահատկությունները, որն ունի աշխատանքի շուկայի հայաստանյան մոդելը: Այսպիսով, մեր կողմից նշված մոդելում որպես աշխատանքի շուկայի սուբյեկտներ հանդես են գալիս աշխատողները, գործատուները և պետությունը, իսկ աշխատանքի շուկայի հայաստանյան մոդելին բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները՝

- ՀՀ տնտեսությանը բնորոշ է բավականին հաստատուն և անցումային ժամանակահատվածի շոկերի և ճգնաժամերի նկատմամբ թույլ զգայուն զբաղվածություն,
- ոչ ֆորմալ, թաքնված զբաղվածության մեծ տեսակարար կշիռ, որը կառավարությունը դեռևս չի կարողանում վերահսկել, չեն գործում զբաղվածության երաշխիքները, գործատուի և վարձու աշխատողների միջև համաձայնությունները կրում են բանավոր բնույթ և կարճաժամկետ են
- աշխատանքի վարձատրության ոչ բարձր մակարդակ,
- օրենսդրորեն սահմանված ցածր նվազագույն աշխատավարձ, որը բավարար չի նույնիսկ նվազագույն սպառողական զամբյուղի համար,
- առկա է աշխատավարձերի և եկամուտների անհավասարաչափ բաշխում և բևեռացվածություն,
- բնակչության ցածր սոցիալական, մասնագիտական և տարածաշրջանային շարժունություն,
- աշխատատեղերի բացակայություն, աշխատանքի տեղավորման և զբաղվածության գործակալությունների ոչ օպտիմալ աշխատանք,
- աշխատանքի շուկային բնորոշ է աշխատանքային ռեսուրսների շարժ՝ մարզերից դեպի մայրաքաղաք,
- բարձր որակավորում ունեցող մասնագետները գիտության և այլ ոլորտներից տեղափոխվում են իրենց մասնագիտության հետ կապ չունեցող ոլորտներ կամ արտագաղթում են,

• բնորոշ է «ոչ ստանդարտ» աշխատանքային օրվա կիրառումը. մարդիկ հաճախ աշխատում են 10-12 ժամ՝ հատկապես առևտրի ոլորտում,

• աշխատանքի շուկայի իրավիճակն արտացոլող տեղեկատվության ճշգրտության աստիճանի բացակայություն, վիճակագրական ծառայությունների տրամադրած տվյալները չեն համապատասխանում իրականությանը և խեղաթյուրում են առկա պատկերը,

• գերակշռում են ինքնակամ աշխատանքից հեռացումները,

• գործազուրկների թվաքանակի մեջ զգալի տոկոս են կազմում երիտասարդները, քանի որ նրանք, չունենալով աշխատանքի փորձ, բավականին դժվարությամբ են մուտք գործում շուկա,

• գոյություն ունի աշխատողների օրենսդրական պաշտպանվածության շատ ցածր մակարդակ, ոչ բոլորն են ենթարկվում աշխատանքային օրենսգրքում սահմանված պահանջներին,

• արհմիությունների կամ արհեստակցական միությունների դերի բացակայություն կամ իրենց ընձեռված ֆունկցիաների և պարտականությունների ոչ նպատակային օտագործում:

Ամփոփելով կարող ենք ասել, որ ժամանակակից հայաստանյան աշխատանքի շուկային բնորոշ է ոչ լրիվ զբաղվածությունը կամ խիստ թերբեռնված աշխատանքը, հարկադիր պարապուրդները, ցածր աշխատավարձը, բնակչության եկամուտների մեծ բևեռացումը, օրենսդրական թույլ դաշտը: Ուստի կատարելագործված և ճիշտ կառավարվող աշխատանքային օրենսդրության և արհմիությունների նպատակին օգտագործման անհրաժեշտություն է զգացվում, որոնց առկայության դեպքում հնարավոր կլինի հասնել տնտեսության և աշխատանքի շուկայի արդիականացմանը: Իսկ վերջիններիս համար անհրաժեշտ են տնեսության աստիճանական բարեփոխումներ: Այդ նպատակով առաջարկում ենք՝

➢ **Կատարելագործել աշխատանքային օրենսդրությունը և դրա կիրառման վերահսկողությունը:** Աշխանտանքային օրենսդրության կատարելագործումը հնարավոր կդառնա բազմաթիվ հակասական օրենսդրական դրույթների հստակեցման ճանապարհով: Իսկ ցանկացած փոփոխություն սկսելուց առաջ նախևառաջ անհրաժեշտ է ապահովել ընդունված օրենքների կատարումը և օրենսդրական դաշտին հետևելը:

➢ **Արհմիությունների ինստիտուտի զարգացումն ու դերի մեծացումը:** Այսօր բավականին շատ զգացվում է արհմիությունների պակասը ՀՀ աշխատանքի շուկայում, իսկ ստեղծված արհմիություններն էլ իրենց նպատակին չեն ծառայում:

➢ **Աջակցել բնակչության արտադրական և ստեղծագործական բոլոր կարգի այն նախաձեռնություններին, որոնք կնպաստեն զբաղվածության և արտադրողական աշխատանքի մակարդակի բարձրացմանը:**

➢ **Ձևավորել որակավորումների և մասնագիտական ստանդարտների ազգային համակարգ, ստեղծել աշխատողների իրավունքների աջակցման համակարգ, իրականացնել մասնագիտական պատրաստման և վերապատրաստման ծրագրեր:** Մրցունակ աշխատողներ ունենալու համար առաջարկվում է ձևավորել որակավորումների և մասնագիտական ստանդարտների ազգային համակարգ, որի նպատակն է լինելու ապահովել աշխատուժի մրցունակության բարձրացում, կազմակերպել վերապատրաստման դասընթացներ, մշակել մասնագիտական որակավորման շնորհման համակարգ և ստեղծել աշխատողների իրավունքների աջակցման համակարգ՝ աշխատանքի նկատմամբ մարդկանց իրավունքը լիարժեք ապահովելու համար: Ինչպես նաև ներգրավել աշխատակիցներին գիտահետազոտական աշխատանքներում, մասնագիտական վերապատրաստման ծրագրերի իրականացման և որակի ապահովման գործընթացների ստեղծման աշխատանքներում, որը հնարավորություն կտա ինչպես ուսանողներին, այնպես էլ գործատուներին գնահատելու տարբեր բուհերի կողմից իրականացվող կրթական ծրագրերի համապատասխանությունն իրենց պահանջներին:

➢ **Ներդնել աշխատակցի էլեկտրոնային անձնագիր:** Այս անձնագրի ներդրումը աշխատանքի շուկայի մոդելն ավելի կատարյալ կդարձնի: Այն բացի նույնականացման

տվյալներից, կպարունակի տեղեկատվություն՝ աշխատակցի կրթության, լրացուցիչ մասնագիտական կրթության, մասնակցած դասընթացների, առկա արտոնագրերի և հավաստագրերի, գիտահետազոտական նախագծերի մասնակցության և այլնի մասին: Իսկ եթե էլեկտրոնային անձնագրին կից տրամադրվի նաև միկրոպրոցեսորային քարտ, ապա այն ոչ միայն իր մեջ տեղեկատվություն կպարունակի տվյալ աշխատակցի մասին այլև կլինի դեպի աշխատանքի վայր մուտքի և ելքի անցագիր: Աշխատակցի էլեկտրոնային անձնագիրը կբարձրացնի աշխատանքի շուկայի տեղեկատվության թափանցիկությունը:

Զբաղվածության պետական կարգավորման համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ բոլոր երկրների համար չկա զբաղվածության կարգավորման գործիքների և կառուցակարգերի կիրառման միասնական համակարգ: Այն տարբեր երկրներում տարբեր է՝ կախված տվյալ երկրի տնտեսական և սոցիալական զարգացվածության աստիճանից, ազգային առանձնահատկություններից: Այս ամենով հանդերձ գոյություն ունի ընդհանուր օրինաչափություն, ըստ որի պետական մակարդակով հնարավոր չէ արդյունավետ կառավարել զբաղվածության ոլորտը: Աշխատանքի շուկայի կարգավորման քաղաքականության նպատակն է մի կողմից աջակցել աշխատատեղի սեփականատիրոջը՝ գործատուին, ձեռք բերել որակավորման որոշակի մակարդակի և քանակի աշխատատողներ, դրանով նախապայման ստեղծելով արտադրանքի գործընթացի կազմակերպման համար, մյուս կողմից աջակցել աշխատանք փնտրող մարդկանց իրենց որակավորմանը, անհատական բնույթին համապատասխան աշխատատեղեր գտնել, ինչպես նաև կազմակերպել գործազուրկների գրանցումը, հաշվառումը, սոցիալական օժանդակությունը և այլն: Աշխատանքի շուկայի կարգավորումն ուղղված է գործազրկության կրճատմանը և զբաղվածության բարձր մակարդակի ապահովմանը, աշխատանքի շուկայում առաջարկի և պահանջարկի հավասարակշռության ապահովմանը:

Եթե փորձենք նայել ՀՀ պետական բյուջեի տարեկան նախագծերը, ապա ամեն տարի բնակչության սոցիալական պաշտպանությանն ուղղված վերջին ժամանակաշրջանի բյուջեի հատկացումների պատկերը հետևյալն է (Աղ.4): `

Աղյուսակ 4. Պետական բյուջեի հատկացումները սոցիալական պաշտպանությանը 2010-2014թթ [11]

Պետական Բյուջեից հատկացումներ (ծախսեր)	Գումարը (հազար դրամ)				
	2010	2011	2012	2013	2014
Ընդամենը ծախսեր	935 524 584,0	1001054275,8	1 044 179 624,5	1 152 619 955,6	1 244 950 143,0
Սոցիալական պաշտպանություն	244 417 227,4	271 930 617,2	307 269 324,1	304 696 825,2	362 030 607,1
Ընդամենի նկատմամբ տոկոս	26,1%	27,2%	29,4%	26,4%	29,1%

Չնայած այն հանգամանքին, որ գնալով ավելանում են բնակչության սոցիալական պաշտպանությանն ուղղված պետական բյուջեի հատկացումները, և կազմում են բյուջեի ծախսերի 26.1-ից մինչև 29.4%-ը՝ այդ գումարները բավական չեն աշխատանքի շուկայի և զբաղվածության ոլորտի արդյունավետ կարգավորումն իրականացնելու համար:

Այսպես, եթե համադրենք 2010-2013 թթ.-ին ՀՀ տնտեսությունում պաշտոնապես գրանցված գործազուրկների, զբաղվածների և այդ նուն ժամանակահատվածում պետական բյուջեից գործազրկությանը կատարված հատկացումները, ապա կունենանք հետևյան պատկերը (Գծ. 2)

[11] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից «ՀՀ 2010-2014թթ-ի Պետական Բյուջեի մասին» օրենքների հիման վրա:



Գծապատկեր 2. ՀՀ տնտեսությունում պաշտենապես գրանցված գործազուրկների, զբաղվածների թվաքանակը և պետական բյուջեից գործազրկությանը կատարված հատկացումները 2010-2013թթ.ին[12]

Դիտարկվող ժամանակահատվածում գործազրկության ֆինանսավորմանը պետական բյուջեից կատարված հատկացումների մեծությունը պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակի կրճատմանը զուգահեռ գնալով նվազել է: Սակայն, քանի որ գործազուրկների թվաքանակի կրճատումը և պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակը չի համապատասխանում իրականությանը, ապա տվյալ պարագայում անհրաժեշտ էր ոչ թե կրճատել գործազրկությանն ուղղված ծախսերի մեծությունը, այլև, ընդհակառակը, ավելի շատ գումարներ հատկացնել գործազուրկներին: Այսօր պաշտոնապես գրանցված գործազուրկների 228.1 հազար ցուցանիշը չի համապատասխանում իրականությանը, քանի որ ոչ բոլոր գործազուրկներին են պաշտոնապես գրանցված: Իսկ եթե փորձենք պարզ հաշվարկ կատարել ապա 2013թ.-ին մեկ գործազուրկին հասել է գործազրկությանն ուղղված բյուջեի հատկացումներից մոտավորապես 17.587 դրամ, ինչը կարող է շատ չնչին մեծություն կազմեր, եթե հաշվի առնվեր ողջ գործազուրկների թվաքանակը: Հետևաբար անհրաժեշտ է վերանայել և բարձրացնել գործազրկությանն ուղղված հատկացումները, այլ ոչ թե կրճատել դրանց գումարը: Ընդ որում աշխատանքի շուկայի կարգավորման հիմքում պիտի դրված լինի նաև զբաղվածների թվաքանակի աճի հարցը, իսկ մեր դիտարկած ժամանակահատվածում զբաղվածների թվաքանակը ևս կրճատվում է, հետևաբար միանգամայն ակնհայտ է, որ բյուջեից հատկացված գումարները բավական չեն նաև զբաղվածների թվաքանակն անփոփոխ պահելու, նոր աշխատատեղեր բացելու և զբաղվածների թվաքանակն ավելացնելու համար: Ուստի նախ և առաջ անհրաժեշտ է այնպիսի օրենսդրական դաշտ և հարմար պայմաններ ստեղծել, որոնք կխրախուսեն փոքր և միջին բիզնեսի զարգացումը, ինչու չէ նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալի աճը, ինչն էլ իր հերթին կհանգեցնի նոր աշխատատեղերի ստեղծմանը և գործազրկության կրճատմանը:

Այսպիսով զբաղվածության պետական կարգավորման շրջանակներում առաջարկվում է իրականացնել հետևյալ միջոցառումների համակարգը, որը կնպաստի աշխատանքի շուկայի զարգացմանը, գործազրկության կրճատմանը և զբաղվածության մակարդակի բարձրացմանը երկրում՝

- **Նոր աշխատատեղերի ստեղծման համար բարելավել գործարար միջավայրը՝** կրճատելով գործարարությամբ զբաղվելու հետ կապված ծախսերը, սահմանափակելով ստուգումների քանակն ու դրամաշորթության հնարավորությունները և վերացնելով

[12] Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից ՀՀ ԱՎԾ-ի վիճակագրական տարեգրքերի և «ՀՀ 2010-2014թթ-ի Պետական Բյուջեի մասին» օրենքների հիման վրա: Ընդ որում 2013թ.ի զբաղվածների և գործազուրկների թվաքանակի ցուցանիշները հաշվառված են 2013թ.-ի հունիսի դրությամբ:

ստվերային տնտեսության անցնելու լծակները: Ժամանակակից տնտեսությունում աշխատատեղերի ստեղծումը պահանջում է ընկերության գրանցման և գործունեության ծավալման հարցերում արգելքների վերացում և գործարար միջավայրի բարելավում:

- **Բարձրացնել մրցակցությունը՝** նոր ընկերությունների ստեղծման և զարգացման խթանման համար: Հայաստանի ապրանքների և ծառայությունների շուկաներում մրցակցության բարձրացումը կարևոր խթան կդառնա նորարարության զարգացման համար և կնպաստի նոր, արդյունավետ ընկերությունների հայտնվելուն շուկայում, որտեղ դեռևս գերիշխում են հին գործելակերպով աշխատող ընկերությունները, որոնք չեն ձգտում ստեղծել նոր աշխատատեղեր: Հայաստանի տնտեսության կապերի ընդլայնումը համաշխարհային շուկայի հետ տեղական ընկերություններին կստիպի բարձրացնել մրցունակության մակարդակը:
- **Բարելավել Հայաստանի աշխատանքային ռեսուրսների որակը՝** ներգրավելով աշխատակիցներին գիտահետազոտական աշխատանքներում, իրականացնելով մասնագիտական վերապատրաստման ծրագրեր և ստեղծելով որակի ապահովման նոր մեխանիզմներ: Միաժամանակ, երկրում ընդհանուր կրթվածության բարձր մակարդակի պարագայում, առանց աշխատանքից կտրվելու վերապատրաստումը մարդկային կապիտալի զարգացման առավել արդյունավետ ճանապարհն է, որն իր հերթին ընդգծում է նոր աշխատատեղերի ստեղծման կարևորությունը: Այդ նպատակով հարկավոր է նաև, որ ուսումնական հաստատությունները գործատուներից ստանան տեղեկատվություն իրենց անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների վերաբերյալ և աջակցություն ուսումնական ծրագրերի ու ուսումնական նյութերի մշակման հարցերում, որպեսզի շրջանավարտների ստացած գիտելիքները համապատասխանի զարգացող տնտեսության և իրենց կողմից ներկայացված պահանջներին:
- **Բարելավել աշխատանք փնտրելու գործընթացի և Զբաղվածության պետական ծառայությունների (ԶՊԾ) կողմից մատուցվող ծառայությունների որակը:** Զարգացնել զբաղվածության պետական ծառայությունների կարողությունները միջնորդական ծառայությունների, այդ թվում՝ աշխատանք փնտրողների վերապատրաստման և խորհրդատվության տրամադրման հարցերում:
- **Վերացնել ազատ աշխատատեղերը զբաղեցնելու մատչելիության խոչընդոտները՝** հնարավորություն ստեղծելով թափուր աշխատատեղերը զբաղեցնել բաց և թափանցիկ մրցույթների միջոցով և ազատ մրցակցության պայմաններում:
- **Աշխատանքի շուկայի զարգացման գործում սփյուռքահայության փորձի կիրառում**: Աշխատանքի շուկայում առկա թերությունների և մասնագիտական պատրաստվածության հետ կապված խնդիրների հաղթահարման ճանապարհներից մեկը սփյուռքահայերի ավելի լայն ներգրավումն է: Սփյուռքահայության ներկայացուցիչներն իրենց գիտելիքների մակարդակով, ինչպես նաև հայրենի երկրի խնդիրների լավ իմացությամբ, առավել մեծ օգուտ կարող են տալ երկրին: Նրանք կարող են հանդիսանալ նորարարության կարևոր աղբյուր և համագործակցության միջոցով նպաստել հիմնախնդիրների լուծմանը: Սփյուռքի մեծ զանգված ունեցող երկրներում ընդունված քաղաքականությունը, այն է՝ ազգի շնորհալի ներկայացուցիչներին հայրենիք վերադարձնելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերը ոչ միշտ են ավարտվում հաջողությամբ, ուստի հարկավոր է այլ մոտեցում ցուցաբերել և նրանց արդյունավետորեն ներգրավվել համատեղ ծրագրերի իրականացման աշխատանքներում՝ առանց փոխելու իրենց կացության երկիրը: Այս ճապարհով Սփյուռքի ներգրավումը հնարավոր կդարձնի նոր ծրագրերի և նորարարական մոտեցումների զարգացումը: Այս ամենի նպատակը սփյուռքահայության և տեղական գործակալությունների փոխադարձ կապերի հաստատումն ու ամրապնդումն է, ինչը հնարավորություն կտա օգուտ քաղել նրանց արտաքին փորձից՝ նպաստելով տեղական կառույցների ձևավորմանը, ածի արգելքների վերացմանը և նորարարության խթանմանը:

ՀՀ աշխատանքի շուկայի ձևավորումն ընթանում է մեծ քանակությամբ տարբեր գործոնների ազդեցության ներքո, որոնք ազդում են նրա զարգացման միտումների և պայմանների վրա: Այս գործոնները տարբերվում են գործունեության մակարդակով, ըստ

իրենց բնութագրերի, ըստ աշխատանքի շուկայի վրա ունեցած ազդեցության աստիճանի և ուղղվածության: Այսպես, օրինակ, աշխատանքային ռեսուրսները ՀՀ-ում առանձնանում են իրենց բավական տարածաշրջանային ցածր շարժունությամբ և կախված են այնպիսի գործոններից, ինչպիսիք են ազգային մենթալիտետը, համակարգային խոչընդոտները և այլն: Աշխատանքի շուկայի վրա ազդող բոլոր գործոններն էլ իրենց և՛ դրական, և՛ բացասական ազդեցությունն են ունենում աշխատանքի շուկայի զարգացման վրա, բայց հետազոտության շրջանակներում դիտարկվել է այդ գործոններից առավել կարևորների ազդեցությունն աշխատանքի շուկայի՝ մասնավորապես գործազրկության մակարդակի վրա, քանի որ այն հանդիսանում է աշխատանքի շուկան բնութագրող առանցքային ցուցանիշներից մեկը: Հետևաբար աշխատանքի շուկայի զարգացումը, կապելով գործազրկության մակարդակի կրճատման հետ, վերլուծության շրջանակներում դիտարկվել են գործազրկության մակարդակի վրա ազդող մի շարք գործոններ և կատարվել է ռեգրեսիոն վերլուծություն: Գործազրկության մակարդակի վրա ազդող գործոնների վերլուծության շրջանակներում կառուցված տնտեսաչափական մոդելների համակարգի հիման վրա կատարված քանակական գնահատման արդյունքում վեր են հանվել և հիմնավորվել գործազրկության մակարդակի կրճատման վրա ազդող մակրոտնտեսական, ֆինանսական և սոցիալական հիմնական գործոնների ազդեցության աստիճանն ու ուղղությունները:

Նախ դիտարկենք գործազրկության մակարդակի դինամիկան ՀՀ-ում 2000-2012թթ. (Գծ. 3): Դիտարկվող ժամանակահատվածում այն գտնվել է բավականին անկայուն վիճակում, ավելին կտրուկ աճ է դիտվել ճգնաժամային տարիներին և դեռևս այդ աճը չի կրճատվել այնքան, որպեսզի հավասարվի նախաճգնաժամային տարիների ցուցանիշին :



Գծապատկեր 3. Գործազրկության մակարդակը ՀՀ-ում 2000-2012թթ.-ին, %[13]

Գործազրկության մակարդակի նման տատանումները նախևառաջ կախված են ՀՆԱ-ի մեծությունից՝ մասնավորապես նրա բաղադրիչներից յուրաքանչյուրի մեծությունից: Չնայած, վերը նշված գործոնների արձանագրված արդյունքներին, ռեգրեսիոն վերլուծության արդյունքներում պարզ դարձավ, որ վերը նշված գործոններից ոչ բոլորն են, որ նշանակալից ազդեցություն ունեն գործազրկության մակարդակի վրա: Գործազրկության մակարդակի վրա թերևս ամենաշատ ազդեցությունն ունի առևտրի և ծառայությունների ծավալը, այնուհետև որոշ չափով նաև շինարարության ծավալը: Վերլուծության արդյունքում այս գործոնների և գործազրկության մակարդակի միջև ստացվել է հետևյալ կապը՝

Գործազրկության մակարդակ = 8.82*Արդյունաբերական արտադրանքի ծավալ+1.86*Գյուղատնտեսական արտադրանքի ծավալ-1.33*Շինարարության ծավալ+6.32*Առևտրի ու ծառայությունների ծավալ+1.303[14]

[13] Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից ՀՀ ԱՎԾ-ի վիճակագրական տարեգրքերի տվյալների հիման վրա:

Այսպիսով վերլուծության արդյունքում ստացվեցին հետևյալ կապերը՝ արդյունաբերական արտադրանքի ծավալի 1% աճը բերում է գործազրկության մակարդակի 8.8% աճին, գյուղատնտեսական արտադրանքի 1% աճը բերում է գործազրկության մակարդակի 1.9% աճին, առևտրի ու ծառայությունների 1% աճը բերում է գործազրկության մակարդակի 6.3% աճին և միմիայն շինարարության ծավալների աճի դեպքում հնարավոր կլինի կրճատել գործազրկության մակարդակը 1.3%-ով: Ճիշտ է նաև հակառակ պնդումը: Արդյունքում ստացվեց, որ 2000-2012թթ ՀՆԱ-ի բաղադրիչներից միայն շինարարության ծավալների աճման արդյունքում է ապահովվել գործազրկության մակարդակի կրճատում, իսկ մյուս գործոնները միմիայն իրական աճեն են ապահովել և չեն նպաստել գործազրկության կրճատմանը: Իսկ քանի որ ճգնաժամի տարիներին շինարարության ծավալները զգալի կրճատվել են, ապա միանգամայն ակնհայտ է թե ինչով է պայմանավորված այդ նույն ժամանակահատվածում գործազրկության մակարդակի նմանատիպ աճը: Բացի այդ արդյունաբերական արտադրանքի, գյուղատնտեսության, առևտրի և ծառայությունների ծավալների աճի դեպքում գործազրկության մակարդակի աճը պայմանավորված է տվյալ ոլորտներում առկա գնաճերով: Արտադրանքի ծավալների աճման մեջ նշանակալի դերն ընկած է գնաճի վրա և ոչ թե ֆիզիկական ծավալի աճի վրա հետևաբար ՀՆԱ-ի այդ բաղադրիչների աճը բացասական է անդրադառնում գործազրկության մակարդակի կրճատման վրա:

Հայաստանյան աշխատանքի շուկայի մասնավորապես գործազրկության մակարդակի վրա ազդող մյուս կարևոր գործոնները բնակչությանը տրամադրվող վարկերի ծավալներն են, կատարված ներդրումների ծավալը, ինչու չէ նաև «արտերկրից» ստացված ընթացիկ տրանսֆերտների ծավալը: Չնայած այն հանգամանքին, որ դիտարկվող ժամանակահատվածում տրամադրվող վարկերի ծավալը գտնվել է շարունակական աճի փուլում և առավել կտրուկ աճել ճգնաժամային տարիներին և դրանից հետո, դիտարկվող գործոններից վարկերն ամենաշատ նշանակալից ազդեցությունն ունեն գործազրկության մակարդակի վրա: Իսկ ռեգրեսիոն վերլուծության արդյունքում գործազրկության մակարդակի և նրա վրա ազդող այս գործոնների միջև դիտվել են հետևյալ կապերը՝

Գործազրկության մակարդակ = -3.75*Ներդրումների ծավալ+8.78*Տրամադրված վարկերի ծավալ-6.21*«արտերկրից» ստացված ընթացիկ տրանսֆերտների ծավալ + 10.904[15]

Այսինքն ներդրումների ծավալի 1% աճը կհանգեցնի գործազրկության մակարդակի 3.7% կրճատմանը, տրամադրված վարկերի 1% աճը կհանգեցնի գործազրկության մակարդակի 8.7% աճին, իսկ «արտերկրից» ստացված ընթացիկ տրանսֆերտների ծավալ 1% աճը ևս կհանգեցնի գործազրկության մակարդակի կրճատմանը: Ուստի ստեղծված իրավիճակում անհրաժեշտ է շեշտը դնել ներդրումների և «արտերկրից» ստացված ընթացիկ տրանսֆերտների ծավալների աճին, որոնք կնպաստեն գործազրկության մակարդակի կրճատմանը և աշխատանքի շուկայի զարգացման խթան կդառնան: Չնայած տրամադրված վարկերի նշանակալից ազդեցությանը դրանք գործազրկության մակարդակի հետ ուղիղ կախման մեջ են գտնվում, իսկ դա բացատրվում է այն հանգամանքով, որ այդ տրամադրված վարկերը վերջին տարիներին հիմնականում տրամադրվել են նախկինում տրամադրված վարկերի վերաֆինանսավորման համար, այլ ոչ թե իրական հատվածում ներդրումներ կատարելու համար: Սա էլ պայմանավորված է տնտեսությունում առկա վատ վիճակով և ֆինանսատնտեսական ճգնաժամով: Հենց վերաֆինանսավորման պատճառով էլ

---

[14] Հաշվարկները կատարված են հեղինակի կողմից Eviews ծրագրային փաթեթի միջոցով, տվյալները վերցված են ՀՀ ԱՎԾ-ի վիճակագրական տարեգրքերից: Արդյունքների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվությունը տեղադրված է հավելվածում:

[15] Հաշվարկները կատարված են հեղինակի կողմից Eviews ծրագրային փաթեթի միջոցով, տվյալները վերցված են ՀՀ ԱՎԾ-ի վիճակագրական տարեգրքերից: Արդյունքների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվությունը տեղադրված է հավելվածում:

տրամադրված վարկերն իրենց ծավալով նպաստել են գործազրկության մակարդակի կրճատմանը:

Մեկ այլ գործոնների խումբ, որոնք ևս ազդում են աշխատանքի շուկայում գործազրկության մակարդակի վրա իրենցից ներկայացնում են տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքը (հաշվարկների ժամանակ դիտարկվել է միայն դրամային վարկերի միջին տոկոսադրույքը՝ տրամադրված մինչև 1 տարի ժամկետով՝ բացառությամբ ցպահանջ տոկոսադրույքի), վերաֆինանսավորման տոկոսադրույքը ժամանակաշրջանի վերջի դրությամբ և գների աճման տեմպը՝ ՍԳԻ-ին: Դիտարկվող ժամանակահատվածում, առավել ևս հետճգնաժամային տարիներին տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքը նվազել է, սակայն վարկերի միջին տոկոսադրույքը և վերաֆինանսավորման տոկոսադրույքը նշանակալից ազդեցություն չունեն գործազրկության մակարդակի վրա: Ընդհակառակը գործազրկության մակարդակի վրա վերը թվարկված գործոններից ամենաշատ նշանակալից ազդեցությունն ունի գների աճման տեմպը, ընդ որում այդ ազդեցությունը հակադարձ չի, և գների աճը բացասաբար է անրադառնում գործազրկության մակարդակի վրա, այսինքն գների աճին զուգահեռ աճում է նաև գործազրկության մակարդակը: Ուստի Կենտրոնական Բանկն առաջին հերթին պետք է իրականացնի գնաճի զսպման քաղաքականություն:

Ռեգրեսիոն վերլուծության միջոցով ստացվել են հետևյալ կապերը այս ցուցանիշների միջև՝

Գործազրկության մակարդակ = -0.52* Վարկերի միջին տոկոսադրույք + 0.55* Վերաֆինանսավորման տոկոսադրույք + 0.85* Գնաճ (ՍԳԻ)- 70.535[16]

Վերլուծության արդյունքում ստացվեցին հետևյալ կապերը գործազրկության մակարդակի և նրա վրա ազդող վերը թվարկված գործոնների միջև՝ վարկերի միջին տոկոսադրույքը 1% աճի կբերի գործազրկության մակարդակի կրճատման 0.5%-ով, վերաֆինանսավորման տոկոսադրույքի 1% աճը կհանգեցնի գործազրկության մակարդակի 0.6% աճին, իսկ գների 1% աճը կհանգեցնի գործազրկության մակարդակի 0.9% աճին: Հետևաբար, նախևառաջ, անհրաժեշտ է զսպել գնաճը և հետո նոր բարձրացնել վարկերի միջին տոկոսադրույքը: Իսկ վարկերի տոկոսադրույքի բարձրացումն ինքնին կնպաստի գնաճի զսպմանը: Քանի որ, երբ բարձրանա վարկերի տոկոսադրույքը, արդյունքում վարկերի պահանջարկը կնվազի, իսկ դա կհանգեցնի տնտեսությունում փողի պահանջարկի աճին հետևաբար և գնաճի զսպմանը: Վարկերի միջին տոկոսադրույքի ազդեցությունը բացատրվում է նաև այն հանգամանքով, որ բանկերի կողմից տարվող վարկային քաղաքականությունն ուղղված չի տնտեսության իրական հատվածի զարգացմանը:

Գործազրկության մակարդակի վրա զգալի ազդեցություն ունեցող գործոն է նաև արտագաղթը, ինչից անմասն չի մնացել նաև մեր երկիրը: Ավելին այն այսօր զգալի մեծ չափերի է հասել և գնալով մեծանում է աշխատանք չունենալու պատճառով և գոյատևման միջոցներ չունենալու պատճառով երկիրը լքածների թվաքանակը: Եթե դիտարկենք ժամանածների և մեկնածների հաշվեկշիռի ազդեցության աստիճանը գործազրկության մակարդակի վրա ապա այն, ինչպես ստացվեց վերլուծության արդյունքներում ևս նշանակալից ազդեցություն ունի գործազրկության մակարդակի վրա: Ընդ որում այս երկու ցուցանիշները գտնվում են հակադարձ կախման մեջ: Ռեգրեսիոն վերլուծության արդյունքում այս դիտարկվող գործոնը և գործազրկության մակարդակը գտնվում են հետևյալ կապի մեջ՝

Գործազրկության մակարդակ = -0.09* ժամանածների ու մեկնածների հաշվեկշիռ + 10.435[17]

---

[16] Հաշվարկները կատարված են հեղինակի կողմից Eviews ծրագրային փաթեթի միջոցով, տվյալները վերցված են ՀՀ ԱՎԾ-ի վիճակագրական տարեգրքերից: Արդյունքների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվությունը տեղադրված է հավելվածում:

Այսինքն ստացվեց, որ եթե ժամանածների ու մեկնածների հաշվեկշռի թիվը աճի 1%-ով, ապա դրա արդյունքում գործազրկության մակարդակը կկրճատվի 0.1%-ով: Ասվածի համատեքստում ստացվեց, որ գործազրկությունը կկրճատվի այն ժամանակ, երբ մեծանա մեկնողների թվաքանակը, ինչը միանգամայն տրամաբանական է, քանի որ հիմնականում երկրից մեկնում են գործազուրկները կամ հարկադիր պարապուրդում գտնվող աշխատունակ բնակչությունը, իսկ սա մեր երկրի համար, թերևս, ոչ ցանկալի արդյունք է:

Ամփոփելով կարող ենք ասել, որ վերը դիտարկված գործոններից ոչ բոլորն են, որ նշանակալից ազդեցություն ունեն ՀՀ-ում գործազրկության մակարդակի, այդ թվում նաև աշխատանքի շուկան բնութագրող մյուս ցուցանիշների վրա: Դիտարկված գործոններից շինարարության ծավալները, ներդրումների ծավալները, «արտերկրից» ստացված ընթացիկ տրանսֆերտների ծավալները, վարկերի միջին տոկոսադրույքն ու արտագաղթածների թվաքանակն է, որ և՛ նշանակալից ազդեցություն ունեն ՀՀ-ում գործազրկության մակարդակի վրա, և՛ նրանց 1% փոփոխությունը հանգեցնում է գործազրկության մակարդակի հակադարձ փոփոխությանը: Իսկ գործազրկության մակարդակի վրա մյուս նշանակալից ազդեցություն ունեցող գործոնները՝ առևտրի ու ծառայությունների ծավալը, վարկերի ծավալը և գնաճի մակարդակն ուղիղ կախվածության մեջ են գտնվում ՀՀ գործազրկության մակարդակի հետ և այդ ցուցանիշների միավոր աճը հանգեցնում է գործազրկության մակարդակի աճին և հակառակը: Այսպիսով, Հայաստանի աշխատանքի շուկայի զարգացումը թեև տեղի է ունենում ճգնաժամի ազդեցության, ստվերային տնտեսության և աշխատանքի ստվերային շուկայի ներքո, այնուամենայնիվ գործազրկության մակարդակի կրճատման և աշխատանքի շուկայի աշխուժացման համար ձեռնարկված քայլերի հիմքում հաշվի առնելով նաև ստացված վերլուծությունների արդյունքները և կատարված առաջարկությունները հնարավոր է հասնել գործազրկության մակարդակի էական կրճատմանը հետևաբար և աշխատանքի շուկայի վիճակի բարելավմանը:

Հետազոտության թեմայի շրջանակներում դրված խնդիրներին ու նպատակներին համապատասխան արված ուսումնասիրություններն ու վերլուծությունները թույլ են տալիս կատարել մի շարք եզրակացություններ և առաջարկություններ, որոնք հանգում են հետևյալին՝

1. Ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակահատվածում, ինչպես նաև դրան հաջորդող առաջին տարվա ընթացքում զգալի փոփոխություններ են դիտվել ՀՀ-ի մակրոտնտեսական ցուցանիշների մեջ: Բացի այն, որ զգալի չափերով կրճատվել է երկրում ՀՆԱ-ի մեծությունը (2009թ-ին մոտ 14.1%), աճել է նաև գործազրկության մակարդակը, երկրում դիտվել է 9.4% գների աճ, ավելացել են բյուջեի ծախսերը, որի շնորհիվ էլ համախմբված բյուջեի պակասուրդը ավելի է մեծացել և կազմել է -7.5%: Սակայն 2010-2012թթ-ի ընթացքում արդեն նկատելի է, որ տնտեսությունը կրկին թևակոխել է վերելքի փուլ և դրական փոփոխություններ են գրանցվել մակրոտնտեսական ցուցանիշներում, այդ թվում նաև զգալիորեն նվազել է համախմբված բյուջեի պակասուրդը և ավելացել ՀՆԱ մեծությունը:

2. Չնայած ձեռնարկված հակաճգնաժամային միջոցառումներին, որոնք ուղեկցվեցին տնտեսությունում նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ, ՀՆԱ-ի աճով, գործազրկության մակարդակի կիճատմամբ, նոր աշխատատեղերի ստեղծմամբ ու զբաղվածության թվաքանակի աճով, տնտեսությունը դեռևս գտնվում է լճացման փուլում: Ավելին, նվազագույն աշխատավարձի և միջին աշխատավարձի բարձրացումը ոչ մի կերպ չի նպաստում աղքատության մակարդակի կրճատման վրա: Իսկ հաշվարկները ցույց

[17] Հաշվարկները կատարված են հեղինակի կողմից Eviews ծրագրային փաթեթի միջոցով, տվյալները վերցված են ՀՀ ԱՎԾ-ի վիճակագրական տարեգրքերից: Արդյունքների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվությունը տեղադրված է հավելվածում:

տվեցին, որ գների 1% աճը կարող է հանգեցնել աղքատության մակարդակի 1.4% աճին: Այսինքն աղքատության մակարդակն ուղիղ կախվածության մեջ է գտնվում աշխատավարձի մակարդակի, գների աճի հետ և աշխատավարձի բարձրացումը փոխհատուցվում է գների աճով: Հետևաբար ստեղծված իրավիճակում աղքատության մակարդակը երկրում կրճատելու համար նախևառաջ անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել մակրոտնտեսական իրավիճակի վրա՝ հատկապես զսպել գնաճը: Եվ միմիայն այս դեպքում արդեն նվազագույն աշխատավարձի փոփոխությունը դրական կազդի աղքատության մակարդակի կրճատման վրա: Բացի այդ մոդելների հաշվարկման արդյունքում ատացված արդյունքները վկայում են, որ՝

- նվազագույն և միջին աշխատավարձերի մակարդակը բավականին հեռու է աղքատության մակարդակը հաղթահարելու համար,
- հրապարակվող վիճակագրական տվյալները, որոնք արտացոլում են իրականացվող սոցիալական քաղաքականությունը, կտրված են տնտեսական իրականությունից և չեն արտացոլում ՀՀ-ում ստեղծված իրավիճակը:

3. Ժամանակակից հայաստանյան աշխատանքի շուկային բնորոշ է ոչ լրիվ զբաղվածությունը (գործազրկությունը) կամ խիստ թերբեռնված աշխատանքը, հարկադիր պարապուրդները, ցածր աշխատավարձը, բնակչության մեծ բևեռացումը, օրենսդրական թույլ դաշտը: Ուստի կատարելագործված և ճիշտ կառավարվող աշխատանքային օրենսդրության և արհմիությունների ինստիտուտի նպատակին օգտագործման դեպքում հնարավոր կլինի հասնել տնտեսությունում աշխատանքի շուկայի արդիականացմանը: Իսկ աշխատանքի շուկայի արդիականացման համար անհրաժեշտ են տնտեսության աստիճանական բարեփոխումներ: Այդ նպատակով առաջարկվել է՝

- կատարելագործել աշխատանքային օրենսդրությունը և դրա կիրառումը,
- արհմիությունների ինստիտուտի զարգացումն ու դերի մեծացումը,
- ձևավորել որակավորումների և մասնագիտական ստանդարտների ազգային համակարգ, ստեղծել աշխատողների իրավունքների աջակցման համակարգ, իրականացնել մասնագիտական պատրաստման և վերապատրաստման ծրագրեր,
- աջակցել բնակչության արտադրական և ստեղծագործական բոլոր կարգի այն նախաձեռնություններին, որոնք կնպաստեն զբաղվածության և արտադրողական աշխատանքի մակարդակի բարձրացմանը,
- ներդնել աշխատակցի էլեկտրոնային անձնագիր:

4.Զբաղվածության պետական կարգավորման շրջանակներում առաջարկվել է իրականացնել հետևյալ միջոցառումների համակարգը, որը կնպաստի երկրում աշխատանքի շուկայի զարգացմանը, գործազրկության կրճատմանը և զբաղվածության մակարդակի բարձրացմանը՝

- նոր աշխատատեղերի ստեղծման համար բարելավել գործարար միջավայրը,
- բարձրացնել մրցակցությունը՝ նոր ընկերությունների ստեղծման և զարգացման խթանման համար,
- բարելավել Հայաստանի աշխատանքային ռեսուրսների որակը,
- բարելավել աշխատանք փնտրելու գործընթացի և ԶՊՕ-ների կողմից մատուցվող ծառայությունների որակը,
- վերացնել ազատ աշխատատեղերը զբաղեցնելու մատչելիության խոչընդոտները,
- աշխատանքի շուկայի զարգացման գործում սփյուռքահայության փորձի կիրառում:

5. Դիտարկված գործոններից ոչ բոլորն են, որ նշանակալից ազդեցություն ունեն ՀՀ-ում գործազրկության մակարդակի այդ թվում նաև աշխատանքի շուկան բնութագրող մյուս ցուցանիշների վրա: Դիտարկված գործոններից շինարարության ծավալները, ներդրումների ծավալները, «արտերկրից» ստացված ընթացիկ տրանսֆերտների ծավալները, վարկերի միջին տոկոսադրույքն ու արտագաղթածների թվաքանակն է, որ և՛ նշանակալից ազդեցություն ունեն ՀՀ-ում գործազրկության մակարդակի վրա, և՛ նրանց 1% փոփոխությունը հանգեցնում է գործազրկության մակարդակի հակադարձ փոփոխությանը: Իսկ գործազրկության մակարդակի վրա մյուս նշանակալից

ազդեցություն ունեցող գործոնները՝ առևտրի ու ծառայությունների ծավալը, տրամադրված վարկերի ծավալը և գնաճի մակարդակը ուղիղ կախվածության մեջ են գտնվում ՀՀ գործազրկության մակարդակի հետ և այդ ցուցանիշների միավոր աճը հանգեցնում է գործազրկության մակարդակի աճին և հակառակը: Այսպիսով, Հայաստանի աշխատանքի շուկայի զարգացումը թեև տեղի է ունենում ճգնաժամի ազդեցության, ստվերային տնտեսության և աշխատանքի ստվերային շուկայի ներքո, այնուամենայնիվ գործազրկության մակարդակի կրճատման և աշխատանքի շուկայի աշխուժացման համար ձեռնարկված քայլերի հիմքում հաշվի առնելով նաև ստացված վերլուծությունների արդյունքները և կատարված առաջարկությունները հնարավոր է հասնել գործազրկության մակարդակի էական կրճատմանը, հետևաբար, և աշխատանքի շուկայի վիճակի բարելավմանը:

Ատենախոսության հիմնական արդյունքները տպագրված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում՝

1. Գրիգորյան Մ. Ա. « ՀՀ աշխատանքի շուկայի մինչճգնաժամային վիճակի վերլուծությունը», ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները- «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու-1(9), 2011թ., Երևան, էջ 184-191:
2. Գրիգորյան Մ. Ա. «Աշխատանքի շուկայի վերաբերյալ տեսությունների համեմատական վերլուծությունը», ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները- «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու-4(16), 2012թ., Երևան, էջ 144-157:
3. Գրիգորյան Մ. Ա. « ՀՀ մակրոտնտեսական վիճակը և աշխատանքի շուկան ճգնաժամի պայմաններում», Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ- Տնտեսության և կառավարման ինստիտուտ: Գիտական աշխատանքերի ժողովածու- գիրք 4, Երևան, «Օր-Դար» հրատարակչություն, 2012թ., էջ 29-41:
4. Գրիգորյան Մ. Ա. « ՀՀ արդյունաբերության նկարագիրը Կոբբ-Դուգլասի ֆունկցիայի միջոցով», Տնտեսության ժամանակակից հիմնահարցեր- ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետ: Ուսանողների, Ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2013թ., էջ 25-29:
5. Գրիգորյան Մ. Ա. «Աշխատանքի շուկան Հարավային Կովկասի երկրներում ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում», ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետ, Տարեգիրք, Երևան, ԵՊՀ Հրատարակչություն, 2013թ., էջ 391-403:

ГРИГОРЯН МЕРИ АРТУРОВНА

“ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ РЫНКА ТРУДА РА В ПОСТКРИЗИСНЫЙ ПЕРИОД”

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02. “Экономика, управление хозяйством и его сферами.

Защита диссертации состоится 4-го июля 2014г. в 13^{30}, на заседании Специализированного Совета по экономике 015 ВАК Республики Армении, действующего в Ереванском государственном университете, по адрессу г. Ереван, 0009, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Актуальность темы исследования: Рынок труда и занятость населения занимают особое место в системе рыночых отношений. В странах с рыночной экономикой право на меры улучшения показателей уровня жизни населения принадлежит государству и государственным органам правления. То есть, государство должно вести такую социально-экономическую политику, которая обеспечит социальный прогресс, экономическую стабилизацию, повышение уровня жизни, а также будет стабилизировать неравенство доходов. А в наличии кризиса, государственная политика, реализуемая со стороны правительства, должна включать в себе проблему занятости населения, должна быть направлена к улучшению законодательства в поддержку занятости населения, к развитию региональных трудовых рынков и обеспечению мобильности рабочей силы в этих регионах, к поощрению экономически активного населения, к улучшению качества рабочих мест, к обеспечению профессиональной подготовки тех сотрудников организаций, которые находятся под угрозой увольнения, к организации испытательной работы для выпускников высших учебных заведений, в ожидании в дальнейшем приступить к работе, и, конечно, к улучшению системы госрегулирования рынка труда.

Несмотря на государственную направленность на создание рабочих мест и на повышение уровня жизни населения, кризис, который проник в страну в конце 2008 года, имел своё отрицательое влияние на рынок труда и занятости населения. Армянский рынок труда из за последствия кризисных явлений всё ещё нестабилен, потому что в условиях мирового финансового кризиса изменения потерпели как субъекты рынка труда, так и взаимоотношения между ними. Кризис уже в прошлом, но в настоящее время в обществе до сих пор сохраняется социальная напряженность, поляризация населения по-прежнему велика, год за годом уменьшается число и занятость населения, увеличивается количество безработных. В таких ситуациях основным вопросом является повышение уровня жизни населения, развития новых подходов для преодоления последствии кризиса и для развития рынка труда. А для осуществления эффективной и продуманной политики на рынке труда, необходимо сделать глубокие исследования, сосредоточиться на многих нерешенных вопросов, а так же на международной практике.

В таких условиях значительно актуально выявления путей и назначенье соответствующих мер для преодоления кризиса и его последствий, а так же для тенденций развития рынка труда в посткризисный период. А проблемы состояния рынка труда и занятости населения исключительно актуальны для армянской экономики, стоящей перед необходимостью сохранить, приумножить и рационально использовать имеющийся трудовой потенциал.

Объект и тема исследования. Объектом диссертации является трудовой рынок, а объектом исследования - влияние финансового кризиса на рынок труда, и тенденции его развития в посткризисной фазе.

Цель и задача исследования. Целью исследования является путем анализа существующих проблем рынка труда РА предложить способы решения этих вопросов на посткризисный этап экономики.

Для достижения указанной определенной цели следующие вопросы были поставлены и решены в рамках исследования:

- рынок труда РА был проанализирован как в докризисное время, а также в период кризиса и посткризисный период;
- были всесторонне проанализированы причины нынешнего финансового кризиса и степени его влияния в РА;
- с помощью регрессионного анализа была создана связь между факторами, характеризующих рынок труда и макроэкономических показателей и, как следствие, были получены необходимые факторы для улучшения экономики;
- армянская модель рынка труда с его типичными характеристиками была завершена: были предложены улучшение путей и список событий для армянской модели рынка труда;
- с помощью количественной оценки ряда влияющих факторов на уровень безработицы РА, были выявлены связи между ними и уровнем безработицы, а также были раскрыты степени и способы воздействия;
- были предложены основные способы государственного регулирования необходимые для развития рынка труда, а также основной список событий, установленных для решения проблем с трудоустройством, развития рынка труда, сокращение безработицы, повышение уровня занятости.

Основные научные результаты и новшество диссертации. В результате исследований и анализов был получен ряд теоретических, методических и практических результатов, из которых следующие отражают основные принципы научных инноваций:

- с помощью всестороннего анализа международного финансового кризиса были оценены последствия кризиса на экономику и на рынок труда РА,
- исходя из сравнительного анализа моделей характеризующие рынок труда и политику занятости, и имея в виду особенности РА, были предложены пути улучшения армянской модели рынка труда,
- были предложены основные мероприятия, направленные на улучшение развития рынка труда, сокращение безработицы, решение проблем безработицы и повышение уровня занятости,
- с помощью анализа влияющих на уровень безработицы была построена система эконометрических моделей, которая позволяет оценить уровень и направление макроэкономических, финансовых и социальных факторов влияющих на уровень безработицы.

Структура и объем диссертации. Исследование состоит из введения, трех глав, вывода и рекомендаций, отзывов и приложений. Текст диссертации содержит 10 таблиц, 28 рисунок. Объем - 158 машинописных страниц (в том числе список использованной литературы и приложения).

GRIGORYAN MERI ARTUR

"THE DEVELOPMENT TRENDS OF THE RA LABOR MARKET IN THE POST-CRISIS STAGE"

The Dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the PHD of Economics in the Field of "Economics, Management of Economy and its Sectors", 08.00.02.

The defense of the Dissertation will take place on July 04, 2014, at 13^{30} at the Meeting of Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University.

Address: Abovyan St. 52, Yerevan, 0009 Armenia

SUMMARY

Relevance of the research: Labor market and employment occupy a special place in the system of market relations. In the countries with market economies the initiative and the right to organize different events aimed at improving some indicators describing the population living standards belong to the state and the governmental institutions. Hence, the state should run such a socio-economic policy that will ensure the social progress, economic stabilization, the rise of the population living standards as well as the mitigationof the irregularity of the income. In the case of crisis the support to the employment policies implemented by the government should include the improvement of legislature supporting public employment, the development of regional labor markets and guarantee of labor mobility in these regions, the promotion of economically active population, the improvement of employment quality, professional training to the employees of the organization who are under threat of dismissal, organization of the trial period for university graduates with future employment expectations and of course, the improvment of the labor market state regulation system.

Currently, despite the work undertaken by the government for the creation of job places and the rise of the population living standards, the crisis, which entered into the country in late 2008, had its negative impact on the labor market and employment. The Armenian labor market is still unstable because of the impact of the crisis, hence the international financial crisis had an influence on the changes of labor market subjects, and the relationships between them. Social tensions still continue in the society, polarization of the population is still high, the number of the population and the level of employment is decreasing year after year and the number of unemployed is increasing. In such sircumstances the main issue is to raise the living standards, to develop new ways to overcome the concequences of the crisis and to point out new approaches of the labor market. In order to for make an effective and deliberate policy of the labor market, it is necessary to do in-depth research focusing on different unsolved issues as well as on international practice.

In such conditions the consequences of financial crisis on the economy of RA and measures of overcoming them, as well as coverage of labor market development trends in the post-crisis period, orders in accordance with the nomination take a sinificant urgency.

The object and subject of the research: While the object of the research is the labor market of RA, the subject of the research is the impact of the financial crisis on the labor market, revealing of market development trends and proposal of nomination resolutions.

The aim and objectives of the reserch: The main goal of the research is to analyze the labor market of RA, to identify its current image and the impact of financial crisis on the labor market, to

analyze the main describing models of employment and labor market policies and to point out main describing characteristics by setting new ways of improving the model and list of events, by pointing out basic ways of solving the employment problems and by offering solutions to solving these issues, by analyzing the main affecting factors on unemployment level in order to disclose the ways and degree of those affecting factorson unemployment level.

To achieve the above stated goal, the following issues have been set and resolved in the frameworks of the research:

- the labor market of RA has been analyzed as during the pre-crisis time as well as during the crisis and the post-crisis times;
- the causes of the current financial crisis and the degrees of their influence in RA were comprehensively analyzed;
- thorugh the use of regression analysis asessed marginal propensity between the factors characterizing the labor market and the macroeconomic indicators and the necessary results for the improvement of the economy were received;
- the Armenian model of the labor market with its typical characteristics has been completed ;
- thorugh the use of regression analysis a number ofaffecting factors on the labor market have been analyzed, the links between them and the level of unemployment have been revealed as well as the degree and ways of influence have been disclosed;
- basic state regulation ways necessary for the development of labor market have been suggested, as well as main list of events set to solve the problems with emplyment, development of labor market, unemployment reduction, increase of the employment level have been offered.

The main scientific results and innovation of research: In the result of studies and analyzes a number of theoretical, methodological and practical outcomes have been obtained from which the basic scientific innovations reflect the following provisions:

- through the comprehensive analysis of the international financial crisis the impact of the crisis on the economy and the labor market of RA have been estimated;
- based on a comparative analysis of different models describing models of labor market and employment policy, and bearing in mind the characteristics of RA, new measures to improve the Armenian labor market model have been proposed;
- basic measures aimed at improving labor market development of RA, reducing unemployment, solving the problems of unemployment and increasing the employment have been developed;
- based on the analyses of the impact of different factors affecting on unemployment level, an econometric model was built, which allows us to estimate the degree and directions of macroeconomic, financial and social factors affecting the unemployment level.

The structure and volume of the study:The study consists of an introduction, three chapters, conclusions references and appendix. The text of the dissertation contains 10 tables and 28 figures. The volume consists of 158 typewritten pages (including the used bibliography and appendix).